

թագին, բայց բնաւ նպաստաւոր չէր նաեւ տը-
ների պառակտումը:

Սակայն, խօսքը այն մասին չէ, թէ ինչ էր
պատճառը նախարարական իրաւակարգի կա-
յունութեան եւ ի՞նչ նրա քայքայման: Փաստ
է, որ սկզբում իշխանական տները կազմում
էին մի մի միութիւն տանուտէրի իրաւասու-
թեան ներքոյ, իսկ յետոյ միութիւնները քակ-
ւում են սեպուհների կեդրոնախոյս ձգտումնե-
րի հետեւանքով: Սրանք գերադասում են դուրս
գալ տոհմական շաղկապից, ստանալով իրենց
հասանելի բաժինը: Սեպուհի բաժինը կոչւում
է սեպուհական = սեպհական: Հետագայում
այս բառը ստանում է այժմեան նշանակու-
թիւնը, որ արդիւնք է սեպուհի եւ սեպհական
բաժնի յարաբերութեան իրաւական բնոյթի:

* * *

Պէտք է նկատել, որ հնդիկ-եւրոպական
լեզուները ընդհանուր բառ չունին սեփակա-
նութեան գաղափարը արտայայտելու համար:
Ապրելով տոհմային կեանքով հնդիկ-եւրոպա-
կան ցեղը տակաւին անծանօթ է եղել սոյն
հասկացողութեան: Միմիայն ցեղի բաժանու-
մից յետոյ է, որ յառաջ է եկել սեփականու-
թեան գաղափարը եւ ամէն ազգ մշակել է, յո-
րինել իւրովի բառ ըստ իւր կեանքի պայման-
ների եւ հասկացողութեան: Անգամ լատին եւ
յոյն լեզուները չունին ընդհանուր արտայայ-
տութիւն: Լատին *proprius*, որ ընդունուած է
արդի եւրոպական լեզուներում, սղումն է *pro-*
patrius բառի, որ է՛ անդրհայրական: Ասել է
թէ սեպհական է համարուած այն ինչ որ եղել
է հօրից յառաջ, ուրեմն հասել է կամ մնացել է
պապերից:

Յունարէնում *idios* ստուգաբանօրէն նշա-
նակում է 'զատ, առանձին' եւ ստացել սեփա-
կանի իմաստ:

Մեզանում եւս նման մտածութեամբ գործ
էր ածւում թերեւս տոհմային սեփականութիւն
արտայայտելու համար հայրենի, բուն, բնիկ
բառերը:

Ազգաթանգեղոսն ասում է՝ «գրուն եւ զձեր
սեփհական Պահլաւն», Փարպեցին՝ «գրնիկ եւ
զսեպհական տեղիս նախնեաց», «գրնիկ սեպ-
հական կալուած ազգին Արշակունեաց»: Կար-
ծես հին բնիկը մեկնուած է նոր սեպհականօ՞վ:

Ազգաթանգեղոսն ունի անգամ բնութիւն
սեփականութեան իմաստով՝ «գրնութիւնն
պարթեւական զձեր սեպհական (եւ ոչ սեփա-
կան, ինչպէս էլ միաձնի հրատար. թէ եւ գէթ
երկու ձեռագիր պահել են ստոյգ ուղղագրու-
թիւնը) Պահլաւն ի ձեզ դարձուցից» (էջ 20)

Փաւստոսը ասում է Ս. Ներսէսի մասին՝
«չըջէր ընդ իւր ձեռակալն իշխանութիւնսն,
զի հնգետասան զաւառ իրրեւ սեպհական ի
բնւէ առանձինն առոշոզի էր նոցա կարգեալ»:

Խօսքը եկեղեցու սեփականութեան մասին
է եւ զձածս բառերը փորձեր են նոյն գաղա-
փարը արտայայտելու, որոնցից վերջին եր-
կուսը մօտենում են յունական *idios-*ին:

Ազգաթանգեղոս ասում է՝ «Ժողովուրդ ձե-
ռակալն անուանեցան» (գլ. ՀԳ) ուր ձեռական
նոյնանիչ է սեպհականի:

Ս. Գիրքը, որ ամենայն դէպքում մնում է
լաւագոյն աղբիւրը բառաքննութեան համար,
գործ է ածում սեպհական բառը ոչ յաճախ եւ
այն տեղերում, ուր իմաստը վիճելի է նաեւ
յունարէն եւ անգամ երբայցի բնագիրներում:

Միայն մի տեղ յոյն «բնակէ ինքն եւ որք
ընդ նմա, *hoi par' autou*» հայր դարձնելով
բաւականին ազատօրէն «բնակեցաւ սեպհական
գնդաւն հանդերձ» (Ա. Մակ. ԺԳ 53), թւում
է թէ հասկանում է սեպհական այժմեան իմաս-
տով:

Միւս դէպքերում սեպհական բառը հա-
մապատասխանում է յոյն *perousios* յայտնի
դարձուածքում՝ «եղիջիք դուք ինձ ժողովուրդ
սեպհական յամենայն ազգաց» (Ելք. ԺԹ. 5,
Օր. է 6, ԺԴ 2, ԻԶ 18, Տիտ. Բ. 14): Ծնն. ԽԸ
22, «ետու քեզ զսիկիմ սեպհական արտաքոյ
եղբարց քոց», վերջին բառերի յոյն ունի *exai-*
reton hyper tous adelfous, այսինքն առաւել
քան եղբայրներդ ունին:

Պետրոսի թղթում «սեպհական ժողո-
վուրդ» է թարգմանուած յոյն *laos eis peri-*
poesin (Ա. Պետ. Բ. 9):

Սեպհական ժողովուրդ չէ նշանակում աս-
տուծոյ սեպհականութիւն, այլ 'յատուկ, ա-
ռանձին, միւս ազգերէն զատ': Տակաւին հնե-
րը, սկսած Ս. Հերոնիմից դժուարանում էին
ըմբռնել յոյն *parousios* եւ *eis peripoesin* նո-
բալուր բառերի բուն իմաստը: